285

1. Գնում եմ ես Հիսուսիս տես,
Որ երկնքում լույս է հագել,
Հոր աջ նստած՝ բարեխոս է,
Սուրբի համար լույս փարոս է:

Երկրի վրա ճամփաս փուշ է,
Բայց Քեզ գալը շատ անուշ է,
Խիստ է ծակում փուշն աշխարհի,
Ո՞վ Սուրբ Հոգի, Դու ինձ պահիր:

2. Հենվեմ վեմիդ, քաշեմ լուծս,
Դու ես միայն Տերս, հույսս,
Հալածանքը սիրով տանեմ,
Հալածողիս սիրեմ, ներեմ:

3. Տե՛ր, ինձ դու տո՛ւր կարողություն,
Տանջանքի մեջ՝ համբերություն,
Ների՛ր գործած սխալներս,
Դու ներող ես, ներո՛ղ Տերս:

4. Դու ինձ գտար ու գրկեցիր,
Սեր, կյանք ու հույս շնորհեցիր,
Սիրո թևով ելնում եմ վեր,
Փարվում եմ Քեզ, իմ Տեր, իմ սեր:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025